



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 30(450) «23» նոյեմբերի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ		
612	««Զենքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-112-Ն օրենքը.....	4
613	««Քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-113-Ն օրենքը.....	7
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
614	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 149-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1235-Ն որոշումը.....	8
615	«2022 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 1242-Ն որոշումը.....	9
616	««Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և (կամ) ծառայությունների մատուցումն ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության կիրառման կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 1243-Ն որոշումը.....	16
617	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի N 522-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 9-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1244-Ն որոշումը.....	19
618	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 17-ի N 244-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի N 412 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 1245-Ն որոշումը.....	20
619	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1246-Ն որոշումը.....	21
620	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի N 342-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1250-Ն որոշումը.....	23

621	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1251-Ն որոշումը.....	24
622	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1254-Ն որոշումը.....	25
623	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1255-Ն որոշումը.....	26
624	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1256-Ն որոշումը.....	27
625	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1257-Ն որոշումը.....	28
626	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1258-Ն որոշումը.....	29
627	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1261-Ն որոշումը.....	30
628	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1267-Ն որոշումը.....	31
629	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 27-ի N 816-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 1268-Ն որոշումը.....	34
630	«Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N 1096-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 1271-Ն որոշումը.....	35
ԻՆՏԵՐՈՂ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԳԱԿԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
631	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի N 24-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 68-Ն որոշումը.....	38
632	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի N 25-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 69-Ն որոշումը.....	39
633	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող	

	պետական հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 11-ի N 37U որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 70-Ս որոշումը.....	40
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
634	«ԼԻԼՄԵԴ ՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 263-Ս հրամանը.....	41
635	«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը սահմանելու մասին» ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 640-Ն հրամանը.....	42
636	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և ներդիրի գործողությունը դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-73-Ս հրամանը.....	47

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի նոյեմբերի 16-ին

«ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զենքի մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-41 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի «բ» կետում «տարածության» բառը փոխարինել «որոշակի հեռավորության» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա», «գ» և «դ» ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա) ողորկ-երկարափող հրազեն՝ այդ թվում՝ Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ առողջապահության բնագավառի լիազոր մարմին) սահմանած վնասվածքային գործողության նորմերին համապատասխանող փամփուշտներով հրազեն.

գ) գազային զենք՝ առողջապահության բնագավառի լիազոր մարմնի կողմից կիրառման համար թույլատրված արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված գազային ատրճանակներ (այդ թվում՝ թմբուկավոր ռևոլվեր), դրանց փամփուշտներ, մեխանիկական փոշեցրիչներ, աերոզոլային և այլ սարքեր.

դ) Արցախի Հանրապետության ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմինների (այսուհետ՝ ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմիններ) պահանջներին և առողջապահության բնագավառի լիազոր մարմնի սահմանած նորմերին համապատասխանող էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Մարտական է համարվում այն զենքը, որն օրենսդրությանը համապատասխան ընդունված է օգտագործել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների պետական ծառայության և հարկային մարմինների զինված ստորաբաժանումների (այսուհետ՝ պետական ռազմականացված կազմակերպություններ) սպառազինության մեջ և նախատեսված է մարտական ու օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) «Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերը փոխարինել «առողջապահության բնագավառի լիազոր մարմնի» բառերով, իսկ «ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական կենտրոնի» բառերը՝ «ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմինների» բառերով.

2) 1-ին մասի 1-ին կետի «թ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«թ) Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված քրեագիտական պահանջներին չհամապատասխանող տեխնիկական բնութագիր ունեցող զենք և ռազմամթերք:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում «ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական կենտրոնը» բառերը փոխարինել «ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմինները» բառերով:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի՝

ա. երրորդ նախադասությունում «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով,

բ. չորրորդ նախադասությունը «կարգով» բառից հետո լրացնել «՝ տասը տարի ժամկետով» բառերով.

2) 5-րդ մասում «որսորդների հասարակական կազմակերպության անդամ-քաղաքացին» բառերը փոխարինել «այն քաղաքացին, որին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված է որսորդությամբ զբաղվելու իրավունք» բառերով.

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Որսորդական ակոսափող հրազեն կարող է ձեռք բերել որսորդությամբ զբաղվելու իրավունք ունեցող այն քաղաքացին, որը՝

ա) ունեցել կամ ունի ծառայողական կամ մարտական զենք պահելու և կրելու իրավունք կամ

բ) ոչ պակաս, քան երեք տարի սեփականության իրավունքով ունի ողորկ-երկարափող որսորդական հրազեն կամ

գ) զբաղվում է որսորդության հետ կապված մասնագիտական գործունեությամբ:

Որսորդական ակոսափող հրազեն ձեռք բերելու իրավունք վերապահող մասնագիտությունների ցանկը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:».

4) 10-րդ մասի՝

ա. առաջին նախադասությունում «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով,

բ. երկրորդ նախադասությունը «կարգով» բառից հետո լրացնել «՝ տասը տարի ժամկետով» բառերով.

5) 14-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

6) 15-րդ մասի՝

ա. «գ» կետում «մարել» բառը փոխարինել «մարվել (հանվել) կամ որոնք ունեն զենքի գործադրմամբ կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մարված (հանված) դատվածություն» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե1» կետ.

«ե1) զենքի շրջանառության և որսորդության հետ կապված վարչական իրավախախտումներ կատարած քաղաքացուն, մինչև այն ժամկետի լրանալը, որի ընթացքում անձը համարվում է վարչական տույժի ենթարկված.».

գ. «ե» կետում «զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների իմացության շուրջ ստուգում անցնելու փաստը հաստատող, ինչպես նաև» բառերը հանել.

5) 17-րդ մասում «Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը» բառերը փոխարինել «առողջապահության բնագավառի լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում «ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական կենտրոնի» բառերը փոխարինել «ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմինների» բառերով:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետում «, իսկ որսորդների հասարակական կազմակերպության անդամ-քաղաքացու վկայականում՝ շեղբավոր որսորդական սառը զենքը» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» կետում «Նախագահը» բառից հետո լրացնել «՝ Արցախի Հանրապետությանը մատուցած նշանակալի ծառայությունների համար» բառերը.

2) 11-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1250-րդ» բառերը փոխարինել «Քաղաքացիական օրենսգրքի 1259-րդ» բառերով:

Հոդված 10. Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 282-րդ» բառերը փոխարինել «Քաղաքացիական օրենսգրքի 283-րդ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «հանրապետական ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոնը» բառերը փոխարինել «ստանդարտացման և չափագիտության, հավատարմագրման լիազոր մարմինները» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասեր.

«Քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Առգրավված (վերցված), կամավոր հանձնված և գտնված զենքի և ռազմամթերքի ընդունման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19

Ստեփանակերտ

ՀՕ-112-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
նոյեմբերի 16-ին

**«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի Քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասում «զբաղեցնելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև քաղաքացիական զենք ձեռք բերելու» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
Ստեփանակերտ
ՀՕ-113-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2021թ.

N 1235-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 149-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած տարածքներում պետական կառավարման մարմինների և պետական կազմակերպությունների աշխատողների վարձատրության գործընթացի կանոնակարգման մասին» N 149-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) հիմնական աշխատավայրում պարապուրդում գտնվելու աշխատանքային օրերի համար՝ 62 500 (վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, իսկ 62 500 (վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամից պակաս վարձատրության դեպքում պահպանվում է աշխատողների վարձատրությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի մարտի 31-ը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2021թ.

N 1242-Ն

ք. Ստեփանակերտ

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի նոյեմբերի 5-ի «2022 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-3431-Ն հրամանագրի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ զ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության 2022 թվականի ձմեռային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի և շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանրապետական զորակոչային հանձնաժողովին կից բժշկական հանձնախմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին՝ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարել հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ձմեռային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին.

2) զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերն ուղարկել Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ապահովել Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչիկների սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար՝ առնվազն մեկ ամիս առաջ մինչև զորակոչը:

5. Առաջարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին՝ զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:

6. Արցախի Հանրապետության նախարարությունների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել նրանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների

կիրառումը և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում ապահովել Արցախի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) ձմեռային զորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել զորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով.

2) զինվորական կոմիսարների ներկայացմամբ հաստատել տարածքային զորակոչային հանձնաժողովների կազմերը (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների)՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Ստեփանակերտում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

8. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով կազմակերպել ֆյուրո (ռենտգեն) զննում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով և ֆյուրո (ռենտգեն) ժապավեններով.

2) Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում «COVID-19» նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով զորակոչիկներին սահմանված կարգով ենթարկել պարտադիր թեստավորման:

9. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝

1) ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումը Արցախի Հանրապետության զորակոչային տեղամասերում.

2) ապահովել Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության տարածքից դուրս՝ զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումն ու նրանց ներկայանալը զորակոչային տեղամասեր.

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին Ստեփանակերտի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել ճանապարհային ոստիկանության համապատասխան անձնակազմ:

10. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինվորական կոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացրած հայտերի:

11. Մահմանել, որ զորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

12. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով ձմեռային զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Արցախի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում,

գորակոչային տարիքի Արցախի Հանրապետության քաղաքացիների Արցախի Հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագործում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

13. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական գորակոչային հանձնաժողովին:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մերգեյ Վլադիմիրի Առստամյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Կարեն Սամվելի Մելքունյան	- «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն, հանձնաժողովի անդամ
Դավիթ Ռոբերտի Արզումանյան	- Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ
Մարատ Ֆելիքսի Դավթյան	- Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, հանձնաժողովի անդամ
Գագիկ Յուրիի Հարությունյան	- Արցախի Հանրապետության ոստիկանության հասարակական կարգի ապահովման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Էրիկ Արտյոմի Ծատրյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետ, հանձնաժողովի անդամ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՇՐՋԱՆՆԵՐԻ (ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արարատ Գեորգիի Խաչատրյան	- Ստեփանակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Զորեն Սերգեյի Ղազարյան	- Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազ- մի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Արամ Գեորգիի Սաֆարյան	- Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Հարություն Արարատի Սահակյան	- Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության ԱԳԲ պետ, հանձնաժողովի անդամ

ՀԱՂՐՈՒԹԻ, ՔԱՇԱԹԱՂԻ, ՇԱՀՈՒՍՅԱՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Անդրեյ Վալերիի Ներսեսյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիա- տի ուղղությունների բաժանմունքի պետ, հանձնաժողովի նախագահ
Արծվիկ Ռոմանի Մախչյան	- Հաղրութի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Մարատ Սամվելի Բարսեղյան	- ԱՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, տնտեսա- կան գործունեության, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով և պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազ, հանձնաժողովի անդամ
Դավիթ Վյաչեսլավի Հակոբյան	- Արցախի Հանրապետության ոստիկանության շտաբի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արսեն Վաղարշակի Աղաբեկյան	- Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Նորայր Ստեփանի Աղաջանյան	- Մարտունու շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի սպորտի գծով գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Դերենիկ Արմենի Խաչատրյան	- Մարտունու և Հաղրութի շրջանների դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ
Լեոնիկ Գավրուշայի Աբրահամյան	- Մարտունու շրջանի ոստիկանության շրջանային բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արծվիկ Անդրանիկի Գաբրիելյան	- Ասկերանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Վահագն Միքայելի Առստամյան	- Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Աշոտ Յուրիի Ղուլյան	- Ասկերանի շրջանի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Նվեր Սլավայի Մելքումյան	- Ասկերանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Իգոր Ռոբիկի Սարգսյան	- Մարտակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Գարիկ Գեորգիի Վանյան	- Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Հովիկ Հրաչիկի Սարգսյան	- Մարտակերտի շրջանի դատախազի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Նարեկ Ռուսլանի Սադյան	- Մարտակերտի շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

Կարինե Էդուարդի Բաղյան	- թերապևտ
Հակոբ Գրիշայի Հակոբյան	- հոգեբույժ
Մրբուհի Ռոմիկի Բաղդասարյան	- նյարդաբան
Գայանե Սպարտակի Թևոսյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Էդվարդ Ռաֆայելի Ստեփանյան	- վիրաբույժ
Սևակ Էմիրջանի Ասլանյան	- ակնաբույժ
Լեոնիդ Եղիշեի Համբարձումյան	- մաշկաբան
Արգինե Վալերիի Ալեքսանյան	- սրտաբան
Կարեն Դմիտրիի Դավթյան	- վնասվածքաբան
Աիդա Երեմի Հարությունյան	- ատամնաբույժ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2021թ.

N 1243-Ն

ք. Ստեփանակերտ

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ (ԿԱՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 43-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Մահմանել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և (կամ) ծառայությունների մատուցումն ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 43-րդ կետին համապատասխան՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին իրականացված ապրանքների մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով տեղեկանքները Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմ են ներկայացվում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ (ԿԱՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒԳՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգը կարգավորում է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 43-րդ կետին համապատասխան՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և (կամ) ծառայությունների մատուցումն ավելացված արժեքի հարկից (այսուհետ՝ ԱԱՀ) ազատելու արտոնության կիրառման հարցերը:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման այն գործարքների վրա, որոնք Օրենքի 15-րդ հոդվածի 29-րդ կետին համապատասխան որակվել են որպես մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրեր:

3. Հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների նկատմամբ Օրենքի 15-րդ հոդվածի 43-րդ կետով սահմանված հարկային արտոնության կիրառման համար հիմք են ընդունվում սույն կարգով սահմանված ձևի տեղեկանքը՝ տրված Հիմնադրամի կողմից և համապատասխան հաշվարկային ու վճարային փաստաթղթերը:

4. Տեղեկանքը կազմվում է չորս օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Հիմնադրամում, մեկ օրինակը տրվում է ապրանքների մատակարարում և (կամ) ծառայությունների մատուցում իրականացնող անձին, իսկ երկու օրինակները Հիմնադրամի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմ:

5. Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմը սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկանքը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառում է և դրա մեկ օրինակն ուղարկում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կազմված է 4 օրինակից
Օրինակ N_____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« _____ » _____ 20 թ. N _____

Մույնով հաստատվում է, որ 20 _____ թվականի _____ ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի և

_____ (ապրանքներ մատակարարողի և (կամ) ծառայություններ մատուցողի անվանումը (անունը, ազգանունը)),

_____ (ՀՎՀՀ-ն, գործունեության (բնակության) վայրի հասցեն)

միջև կնքված պայմանագրին վերաբերող

_____ (գործարքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը)

_____ շրջանակներում,

_____ (ապրանքներ մատակարարողի և (կամ) ծառայություններ մատուցողի անվանումը (անունը, ազգանունը)),

_____ (ՀՎՀՀ-ն, գործունեության (բնակության) վայրի հասցեն)

ձեռք է բերվում

_____ (մատակարարվող ապրանքների և (կամ) մատուցվող ծառայությունների համառոտ նկարագրությունը)

_____ (մատակարարվող ապրանքների քանակը և (կամ) մատուցվող ծառայությունների ծավալը, դրանց ընդհանուր արժեքը, ապրանքների մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման ժամկետը)

Մատակարարված ապրանքների և (կամ) մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի
լիազորված պաշտոնատար անձ

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2021թ.

N 1244-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 522-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 9-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 522-Ն որոշումը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 9-Ն որոշումը հաստատված N 2 հավելվածի 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց մինչև բռնագաղթելն աշխատած ժամանակահատվածը, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրերում աշխատած անձանց մինչև 2014 թվականի հունվարի 1-ն աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառվում է օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ լիազոր մարմնի կողմից ստեղծված աշխատանքային ստաժ սահմանող հանձնաժողովի որոշումներով:»:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2021թ.

N 1245-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 17-Ի N 244-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 412 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 17-ի «Հարկային մարմնի կողմից եկամտային հարկի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 244-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ» բառերով.

2) որոշման 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին և 2-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետում 8-րդ ենթակետի «գ» պարբերությունում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 8-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ ենթակետ.

«9) յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով, մինչև եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը՝ հարկ վճարողների կողմից հարկային մարմին էլեկտրոնային տարբերակով ներկայացված եկամտային հարկի հաշվարկներում արտացոլված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:»,

բ. 3-րդ կետում «եղանակով» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 9-րդ ենթակետում նշված տեղեկատվությանը, որը տրամադրվում է թղթային եղանակով)» բառեր:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը տեղեկություններ տրամադրելու մասին» N 412 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 նոյեմբերի 2021թ.

N 1246-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի օգոստոսի 2-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ «ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՂԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱՒԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն
ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ վակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
04			ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		11	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	-	-	(197 704,6)
			ԱՀ ջրային կամփոտե	-	-	-	(197 704,6)
06			ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	3		Ջրամատակարարում	-	-	-	-
		1	Ջրամատակարարում	-	-	-	-
		01	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	-	-	-	277 704,6
			ԱՀ ջրային կամփոտե	-	-	-	277 704,6
		02	Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	-	-	-	(80 000,0)
			ԱՀ ջրային կամփոտե	-	-	-	(80 000,0)

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1250-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 342-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի «Ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 342-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկերի մասին» օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված՝ Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային (փոխառության) պայմանագրերի հիման վրա ստացված ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների փոխհատուցման նպատակով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկի գումարների վերադարձնելու հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի կիրառման իմաստով՝ ձեռնարկատիրական վարկ (փոխառություն) են համարվում նաև գյուղատնտեսական վարկը և ֆինանսական վարձակալությունը (լիզինգը):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1251-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,22 հեկտար արտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1254-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,14 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1255-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 176 և N 177 որոշումներով հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1256-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2967 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1257-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 168 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,24 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերից, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Վանքի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1258-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 629 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գետավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 1,0 հեկտար անտառը, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 նոյեմբերի 2021թ.

N 1261-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 19-Ի N 385-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում «ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՀ-ՈՒՄ ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ» բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժին.

«

ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ		
12.8	Գործակալության պետ	9,60
12.9	Գործակալության պետի տեղակալ	6,80
12.10	Գործակալության պետի օգնական	2,50
12.11	Բաժնի պետ	4,70
12.12	Բաժնի գլխավոր մասնագետ	3,88
12.13	Բաժնի առաջատար մասնագետ	2,66

».

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի.

ա. 1-ին տողում «շտաբի» բառից հետո լրացնել «, ԱՀ Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության» բառերը,

բ. 4.3 -րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«

4.4	ԱՀ Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության տնտեսվար	2,00
4.5	ԱՀ Նախագահի աշխատակազմի թվայնացման գործակալության հավաքարար	1,50

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2021թ.

N 1267-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴՄԱՆՈՒ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Ծերություն	-	-	-	(165 000,0)
		1	Ծերություն	-	-	-	(165 000,0)
		01	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	-	-	-	(65 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	(65 000,0)
		06	Աշխատանքային կենսաթոշակներ				(100 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	(100 000,0)
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	-	(550 000,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	-	(550 000,0)
		06	ԱՀ-ում ծնելիության խթանում	-	-	-	(150 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն				(150 000,0)
		07	Զինվորական և փրկարարական ծառայության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի հատուցում				(400 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	(400 000,0)
	5		Գործազրկություն	-	-	-	(35 000,0)
		1	Գործազրկություն	-	-	-	(35 000,0)
		06	Պետական աջակցություն գործազուրկներին	-	-	-	(35 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն				(35 000,0)
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ	-	-	-	900 000,0

			դասերին չպատկանող)				
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	900 000,0
		01	Տեղահանված քաղաքացիների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ	-	-	-	1 000 000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	1 000 000,0
		03	Ամենամսյա դրամական օգնություններ և պարգևավճարներ	-	-	-	(100 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	(100 000,0)
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(150 000,0)
		2	Սոցիալական պաշտպանությունը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(150 000,0)
		05	Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ	-	-	-	(150 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	-	(150 000,0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2021թ.

N 1268-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 27-Ի N 816-Ն ՈՐՈՇՈՒՄԸ
ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 43-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. Չեղյալ ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 27-ի «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 27-ի N 377-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 816-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2021թ.

N 1271-Ն

ք. Ստեփանակերտ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՑԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19)
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1096-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի «թ» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ո շ ու մ է.**

1. Հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախագուշացումը համավարակի հերթական ալիքի վտանգի մասին, կարևորելով բնակչության առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման նպատակով համապատասխան կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության համապատասխան առաջարկությունը, Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված սահմանել կարանտին Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2021 թվականի նոյեմբերի 24-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը, ժամը 17:00-ը ներառյալ:

2. Սահմանել՝ կարանտինի ընթացքում կիրառվող միջոցառումները և սահմանափակումները՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում կիրառվում են անհատական պաշտպանության միջոցներ՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված ցանկի, կիրառման դեպքերի և կարգի համաձայն:

4. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետով սահմանված միջոցառումները և սահմանափակումները կիրառվում և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքներով սահմանված կարգով՝ այդ օրենքներով նախատեսված մարմինների կողմից:

5. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկօրյա ժամկետում ստեղծել աշխատանքային խումբ՝ Արցախի Հանրապետության առողջապահության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Արցախի Հանրապետության ներքին գործերի, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ սույն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

6. Սույն որոշման կատարման համակարգումը վերապահել Արցախի Հանրապետության պետական նախարարին:

7. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը սահմանելու մասին» N 1096-Ն որոշումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԿԱՐԱՆՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՍԱՀՄԱՆՍՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

1. Արցախի Հանրապետության հանրային իշխանության մարմինները, տնտեսական գործունեության առանձին տեսակներ իրականացնող, ծառայություններ մատուցող և տնտեսական գործունեությամբ չբաղվող կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ապահովում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանումը:

2. Երկարատև խնամքի ծառայություններ մատուցող հաստատություններում և հոգեբուժական կազմակերպություններում տեսակցություններ թույլատրվում են բացառապես կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) գործող դեպքերի բացակայության և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման դեպքում:

3. Բոլոր կրթական հաստատություններում ուսումնական գործընթացը կարող է իրականացվել միայն Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ:

4. 2021 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 27-ը ներառյալ Ստեփանակերտ քաղաքում գործող բոլոր ուսումնական հաստատություններում ուսուցումն անցկացնել հեռավար:

5. Հավաքներ կարող են կազմակերպվել, անցկացվել և հավաքներին կարող է մասնակցել առավելագույնը 100 անձ՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ:

6. Փակ տարածքներում անցկացվող միջոցառումներին կարող է մասնակցել առավելագույնը 40 անձ (մանկական միջոցառումների անցկացման դեպքում՝ 20 անձ)՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանմամբ:

7. Բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս և տեղաշարժվելիս անձը հաստատող փաստաթղթի կամ դրա պատճենի (այդ թվում՝ էլեկտրոնային պատճենը) առկայությունը պարտադիր է: Անձը հաստատող փաստաթղթի պատճենը (այդ թվում՝ էլեկտրոնային պատճենը) պետք է լինի տեսանելի, իսկ դրանում առկա տվյալները՝ բավարար չափով պարզ և ընթեռնելի՝ անձի նույնականացումն ապահովելու համար:

8. Հեռավար ուսուցում անցնող ուսումնական հաստատությունների սովորողի ծնողին, հղի կանանց, 55 տարին լրացած և ռիսկային գտնում գտնվող այլ անձանց աշխատանքը հնարավոր բոլոր դեպքերում կազմակերպել հեռավար: Ռիսկային գտնում գտնվելու փաստը հաստատվում է բժշկի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի նոյեմբերի 16-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ
18-Ի N 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 68-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 4-ի թիվ 29Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 24-Ն որոշման 2-րդ կետում «մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «չորս տարվա ընթացքում» բառերով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 16
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2021 թվականի նոյեմբերի 16-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ
18-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 69-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 41Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 42Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն որոշման 2-րդ կետում «մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «չորս տարվա ընթացքում» բառերով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 16
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի նոյեմբերի 16-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 11-Ի
N 37Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 70-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 7-րդ, 11-րդ մասերը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների կասեցման և դադարեցման կարգը հաստատելու մասին» N 82Ն որոշումը և հաշվի առնելով «Վալլեքս Գարդեն Հոթել» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 27-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 11-ի «Վալլեքս Գարդեն Հոթել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N 37Ա որոշումը և այդ որոշմամբ «Վալլեքս Գարդեն Հոթել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված 458,510 ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման N 0002 թույլտվությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Վալլեքս Գարդեն Հոթել» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 16
ք. Ստեփանակերտ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» նոյեմբերի 2021թ.

N 263-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԼԻԼՄԵԴ ՑԵՆՏՐ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ`

1. «ԼԻԼՄԵԴ ՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե` Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մ.Բաղրամյան 9/2) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին` ապահովել

1) տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» նոյեմբերի 2021թ.

N 640-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 25.6-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լ.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի նոյեմբերի 15-ի N 640-Ն հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Մույն կարգով կարգավորվում են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) երկարօրյա ուսուցման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Հաստատությունում երկարօրյա ուսուցման կազմակերպումը ծառայում է «Հանրակրթության մասին» օրենքից բխող համակողմանիորեն զարգացած անձի ձևավորման կրթադաստիարակչական նպատակին: Հաստատության երկարօրյա ուսուցումն իրականացվում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու, կրթական հավասար հնարավորություններ ապահովելու և մանկավարժական համապարփակ մոտեցման միջոցով սովորողների ու նրանց ընտանիքի զբաղվածության և այլ կարիքներին արդյունավետ արձագանքելու նպատակով:

3. Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է աշակերտների երկարօրյա ուսուցման խմբերում (այսուհետ՝ Երկարօրյա խմբեր) անհրաժեշտ աշխատակազմի ներգրավմամբ և համակարգվում է տվյալ Հաստատության փոխտնօրենի կողմից կամ տնօրենի նշանակած այլ պատասխանատու աշխատակցի կողմից:

4. Հաստատությունում Երկարօրյա խմբերի կազմակերպման հիմնական խնդիրներն են՝

1) Հաստատության ուսումնանյութական բազայի հիման վրա երեխայի կրթական աջակցության և նրա անհատական ու սոցիալական նախադրյալներին համապատասխան ուսուցման և ժամանցի գործընթացի կազմակերպումը.

2) տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների և երկարօրյա ուսուցման պատասխանատու մանկավարժների միջև հետադարձ կապի միջոցով կրթության արդյունավետության բարձրացումը.

3) տվյալ համայնքում բնակվող տարբեր մասնագետներին և մանկավարժներին, կամավորական հիմունքներով, դպրոցում գիտելիքի և հմտությունների փոխանցման գործընթացին ներգրավումը.

4) արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացումը.

5) արտադպրոցական գործընկերների հետ համագործակցությամբ արտադպրոցական ուսուցման հնարավորությունների բացահայտումը և օգտագործումը.

6) ուսումնական գործընթացի և մասնագիտական կողմնորոշման միջև փոխադարձ կապերի ստեղծումը.

7) երկարօրյա ուսուցման և դպրոցական առօրյայի ձևավորման գործում սովորողների մասնակցության և անձնական պատասխանատվության խթանումը.

8) երկարօրյա ուսուցման ձևավորմանը սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) ներգրավումը.

9) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը:

2. ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

5. Յուրաքանչյուր Հաստատություն ձևակերպում է երկարորյա ուսուցման սեփական մանկավարժական հայեցակարգը, որը քննարկվում և հավանության է արժանանում սովյալ Հաստատության մանկավարժական խորհրդում: Հայեցակարգի մշակման փուլում հաշվի են առնվում համայնքում առկա ուսուցման ու ժամանցային հնարավորությունները և ներգրավվում են Հաստատության մանկավարժական խորհուրդը, ծնողական ու աշակերտական խորհուրդները, ինչպես նաև այլ խորհրդակցական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմնի, կրթամշակութային կազմակերպությունների, արտադասարանական խմբակների ներկայացուցիչները և Հաստատության արտադպրոցական գործընկերները: Մանկավարժական հայեցակարգում ներառվում են հետևյալ հարցերը.

- 1) ուսուցման գործընթացի և սովորել սովորելու մշակույթի զարգացումը.
- 2) սովորողի անհատական կարիքներին արձագանքումը.
- 3) դպրոցում ուսումնափորձարարական հնարավորությունների ընդլայնումը.
- 4) սովորողների և ծնողների մասնակցությունը.
- 5) ժամանցի հնարավորությունների ստեղծումը.
- 6) Հաստատության համագործակցությունը արտադպրոցական գործընկերների

հետ:

6. Երկարորյա ուսուցումը ձևավորվում է բազմազան տարրերից, որոնք բխում են սովյալ Հաստատության մանկավարժական հայեցակարգից: Երկարորյա ուսուցումն ու երկարորյա խմբերի աշխատանքների կարգացուցակը (այսուհետ՝ կարգացուցակ) պետք է ներդաշնակ լինեն Հաստատության ամբողջական դասացուցակին և ռեժիմին:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Երկարորյա ուսուցումը նախատեսված է երկարորյա ուսուցում կազմակերպող Հաստատության 1-ին աստիճանի տարրական (այսուհետ՝ տարրական) և 2-րդ աստիճանի (այսուհետ՝ միջին) դպրոցների բոլոր աշակերտների համար: 500-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցներում երկարորյա ուսուցումը կարող է կազմակերպվել տարբերակված եղանակով: Ավագ դպրոցի աշակերտները կարող են մասնակցել երկարորյա ուսուցման առանձին նախագծերին, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ուսումնական ծրագրերին և ներգրավվել երկարորյա աշխատանքներում: Երկարորյա ուսուցումը իրականացվում է հնգօրյա տևողությամբ՝ անկախ դպրոցի հնգօրյա կամ վեցօրյա լինելուց և տևում է ըստ կրթական աստիճանների, ուսումնական պլանով նախատեսված դասերի ավարտից մինչև առնվազն ժամը 17:30-ը: Եղանակային կամ այլ անհաղթահարելի պայմանների առկայության դեպքում հնարավոր են բացառություններ:

8. Երկարորյա խմբերը ձևավորվում են սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) Հաստատության տնօրենի անունով ներկայացված դիմումի հիման վրա, հաշվի առնելով սովորողի կրթական աստիճանը: Հաստատության տնօրենի և սովորողի ծնողի միջև ընթացիկ ուսումնական տարվա համար կնքվում է Հաստատության կողմից երկարորյա ուսուցման կազմակերպման պայմանագիր:

9. Երկարորյա խմբերը ձևավորվում են ըստ կրթական աստիճանի (տարրական և (կամ) միջին դպրոց, ինչպես նաև հնարավոր է ավագ դպրոց) կամ գուգահեռ դասարանների: Անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր:

10. Երկարորյա խմբերի կազմը, դրանց հետ աշխատող մանկավարժական աշխատողների անվանական կազմը, աշխատանքի տարեկան պլանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների կարգացուցակը ձևավորվում են երկարորյա ուսուցումը համակարգող փոխտնօրենի կամ տնօրենի նշանակած այլ պատասխանատու աշխատակցի կողմից՝ սույն կարգի 5-րդ կետում նշված մանկավարժական հայեցակարգին համապատասխան և հաստատվում են Հաստատության տնօրենի հրամանով:

11. Երկարորյա ուսուցման կազմակերպման համար հաշվի են առնվում Հաստատությունում ուսումնական պլաններին համապատասխան գործող դասացուցակը, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, սանիտարահիգիենիկ կանոնների և նորմատիվների պահանջները: Կարգացուցակում նշվում են սովորողների դասապատրաստման, սննդի, հանգստի, ըստ անհրաժեշտության անհատական աշխատանքների, զբոսանքի, էքսկուրսիաների և խմբակներում ընդգրկված սովորողների անվանական կազմը, խմբակի աշխատանքի

ժամերը, աշխատանքների իրականացման համար պատասխանատու մանկավարժական աշխատողների անունները:

12. Կարգացուցակում փոփոխություններ կարող են կատարվել Հաստատության տնօրենի հրամանով:

13. Կարգացուցակով իրականացված աշխատանքները, ինչպես նաև խմբում ընդգրկված սովորողների հաճախումները գրանցվում են մատյանում:

14. Երկարորյա խմբերում ընդգրկված սովորողների առավելագույն թիվը 30 է:

15. Հաստատության Երկարորյա խմբերը ձևավորվում են մինչև ընթացիկ ուսումնական տարվա սեպտեմբերի 10-ը և համալրվում են ուսումնական տարվա ընթացքում:

16. Երկարորյա խմբերի ռեժիմը (պարապմունքներ, միջոցառումներ, հանգիստ, սննդի կազմակերպում) չի կարող գերազանցել 30 ակադեմիական ժամ՝ տարրական, 20 ակադեմիական ժամ՝ միջին դպրոցների սովորողների համար:

17. Երկարորյա խմբերում դասապատրաստմանն օրական հատկացվում է 1-4-րդ դասարաններում՝ մինչև 2, 5-9-րդ դասարաններում՝ մինչև 3 ակադեմիական դասաժամ:

18. Հաստատության Երկարորյա խմբերում մանկավարժական աշխատողի մեկ դրույքի լրիվ ծանրաբեռնվածությունը (աշխատանքի ծավալը) չի կարող գերազանցել շաբաթական 22 ակադեմիական ժամը:

19. Երկարորյա խմբերը ըստ դասարանների կամ կրթական աստիճանի կազմավորելիս մանկավարժական աշխատողի համար սահմանվում է վճար տվյալ խմբի համար կարգացուցակով սահմանված աշխատանքների դասաժամերի չափով: Երկարորյա խմբերի հետ աշխատող մանկավարժական աշխատողի վճարի չափը ձևավորվում է սովորողների հետ աշխատակարգով սահմանված փաստացի աշխատաժամանակից (մինչև 22 ակադեմիական ժամ):

20. Երկարորյա խմբերի սովորողները կարող են օգտվել Հաստատության գրադարանից, ընթերցասրահից, լաբորատորիաներից և ուսումնական այլ ռեսուրսներից:

21. Հաստատության Երկարորյա խմբերում աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և սույն կարգով:

22. Հաստատության Երկարորյա խմբերի ղեկավարների պարտականությունների մեջ են մտնում սովորողների արտադասարանական և արտադպրոցական, կրթադաստիարակչական ու առողջարարական միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև սովորողների ինքնուրույն աշխատանքի համար պայմանների ապահովումը, անհրաժեշտության դեպքում սովորողներին անհատական օգնության ցուցաբերումը: Երկարորյա խմբերի ղեկավարները պատասխանատվություն են կրում երեխաների կյանքի և առողջության պահպանման, երկարորյա ժամանակահատվածում կրթադաստիարակչական աշխատանքի որակի և դպրոցի ներքին կանոնակարգի աշխատանքային ռեժիմի պահպանման համար:

23. Հաստատության Երկարորյա խմբերի աշխատանքների կազմակերպման, սովորողների կյանքի և առողջության պահպանման, հանգստի ապահովման պատասխանատու է խմբերի ղեկավարները: Երկարորյա խմբերի աշխատանքների կանոնակարգման համար պատասխանատու է Հաստատության փոխտնօրենը կամ տնօրենի նշանակած այլ պատասխանատու աշխատակիցը:

24. Երկարորյա ուսուցման վերահսկողության համար պատասխանատու է Հաստատության տնօրենը:

25. Երկարորյա խմբերի ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման, սովորողների հաճախումների ապահովման համար պատասխանատու են մանկավարժական աշխատողները և սովորողների ծնողները:

4. ԵՐԿԱՐՕՐԾԱ ԾՐԱԳՐԻ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

26. Երկարորյա ուսուցման իրականացման նպատակով յուրաքանչյուր Հաստատության համար նախատեսվում է մանկավարժական աշխատողների հաստիքների համալրում ըստ 1-ից 9-րդ դասարաններում սովորողների թվաքանակի՝

- 1) մինչև 60 սովորողի դեպքում՝ երկու դրույք (նվազագույն դրույք).
- 2) 60-ից 100 սովորողների դեպքում՝ նվազագույն դրույք գումարած մեկ դրույք.
- 3) 100-ից 140 սովորողների դեպքում՝ նվազագույն դրույք գումարած երկու դրույք.
- 4) 140-ից 180 սովորողների դեպքում՝ նվազագույն դրույք գումարած երեք դրույք.

5) 180-ից ավելի սովորողների դեպքում՝ նվազագույն դրույք գումարած չորս դրույք:

27. Երկարորյա ուսուցման մանկավարժական աշխատողների դրույքը համապատասխանում է ուսուցչի համար նախատեսված դրույքին:

28. Երկարորյա ուսուցման մանկավարժական աշխատողների նվազագույն դրույք ունեցող Հաստատությունում այդ հաստիքները կարող են բաժանվել նվազագույնը 0,5 հաստիքի: Նախապատվությունը տրվում է լիարժեք հաստիքներին: Երեքից վեց դրույք ունեցող Հաստատությունում այդ հաստիքները կարող են բաժանվել տարրական և միջին աստիճանների համար երկու լիարժեք հաստիքների, իսկ երրորդ դրույքը կարող է բաժանվել ըստ մասնագիտական նպատակահարմարության:

29. Երկարորյա ուսուցման մանկավարժական աշխատողների ընտրությունը կատարվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նախապես անցնելով երկարորյա ուսուցման համար նախատեսված վերապատրաստման դասընթացը: Նախապատվությունը տրվում է տվյալ Հաստատությունում դեռևս չաշխատող մանկավարժական աշխատողներին: Տվյալ Հաստատության աշխատողներ չհանդիսացող մանկավարժական աշխատողների ներգրավման անհնարինության դեպքում կարող են ներգրավվել Հաստատությունում աշխատող ուսուցիչներ:

30. Հաստատության Երկարորյա խմբերի աշխատանքների կազմակերպման համար մանկավարժական դրույքի 20%-ի չափով հավելավճար ստանում են Հաստատության տնօրենը, տնօրենի նշանակած պատասխանատու աշխատողը, Հաստատության տնտեսական աշխատանքների գծով տեղակալը կամ տնտեսավարը:

5. ԵՐԿԱՐՕՐՅԱ ԽՄԲԵՐՈՒՄ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

31. Երկարորյա խմբերում երեխաների համար կազմակերպվում են երկանգամյա սնունդ (ճաշ և ետճաշիկ): Ճաշի համար նախատեսվում է առնվազն 30 րոպե: Ճաշի և ետճաշիկի միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի երեքից չորս ժամը՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:

32. Երկարորյա ուսուցման իրականացման նպատակով յուրաքանչյուր հաստատության համար նախատեսվում է խոհարարական աշխատողների հաստիքներ, հաշվի առնելով երկարորյա ուսուցման խմբերում ընդգրկված 1-9-րդ դասարաններում սովորողների թվաքանակի՝

- 1) մինչև 35 սովորողի դեպքում՝ մեկ դրույք.
- 2) 35-ից 69 սովորողների դեպքում՝ երկու դրույք.
- 3) 70-ից 100 սովորողների դեպքում՝ երեք դրույք.
- 4) 101-ից 200 սովորողների դեպքում՝ չորս դրույք.
- 5) 201-ից 300 սովորողների դեպքում՝ հինգ դրույք.
- 6) 301-ից 350 սովորողների դեպքում՝ վեց դրույք.
- 7) 350-ից ավելի սովորողների դեպքում՝ յոթ դրույք:

33. Երկարորյա ուսուցման խոհարարական աշխատողների աշխատաժամանակը սահմանվում է Աշխատանքային օրենսգրքի համաձայն:

34. Երկարորյա ուսուցման խոհարարական աշխատողների դրույքը համապատասխանում է նվազագույն աշխատավարձի համար նախատեսված դրույքին:

35. Երկարորյա ուսուցման խոհարարական աշխատողների սանիտարական վիճակի վերահսկողության և սովորողների բուժսպասարկման աշխատանքները իրականացվում են համապատասխան բժշկական ծառայությունների միջոցով:

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

19 նոյեմբերի 2021թ.

ՆՀ-73-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ
ԱՎՏՈՍՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 19-ի N 383-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել անհատ ձեռնարկատեր Արթուր Վարդանյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00114 լիցենզիայի N00004 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) անհատ ձեռնարկատեր Բորիս Միրզոյանի Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00141 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունը.

2) անհատ ձեռնարկատեր Մերյոժա Գրիգորյանի Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00569 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունը.

3) անհատ ձեռնարկատեր Արթուր Վարդանյանի Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00114 լիցենզիայի և N00003 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

